ՏԵՂԵԿԱՆՔ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀԱԴՎԱԾՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 5. Զինվորական ծառայության տեսակները և ժամկետները

1. Զինվորական ծառայության տեսակներն են՝

1) ժամկետային.

2) պահեստազորային.

3) զորահավաքային:

2. Ժամկետային զինվորական ծառայությունը բաղկացած է պարտադիր եւ պայմանագրային զինվորական ծառայություններից:

3. Պարտադիր զինվորական ծառայությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականության իրականացման հիմնական ձեւն է: Պարտադիր զինվորական ծառայություն է համարվում զինված ուժերում եւ այլ զորքերում զորակոչի միջոցով կազմակերպվող ծառայությունը: Օրենքի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիները չեն կարող ընդունվել հանրային ծառայության:

4. Պարտադիր զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է՝

~~1) շարքային կազմի համար՝ 24 ամիս, իսկ կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու համար դիմած իգական սեռի քաղաքացիների համար՝ 6 ամիս.~~

1) շարքային կազմի՝

ա. արական սեռի քաղաքացիների համար՝ 18 ամիս, կամ 6 ամիս՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 15 միլիոն դրամ վճարելու դեպքում, կամ 1 ամիս՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 20 միլիոն դրամ վճարելու դեպքում.

բ. կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու համար դիմած իգական սեռի քաղաքացիների համար՝ 6 ամիս.

1.1) սույն օրենքի ~~19-րդ հոդվածի 1.1-ին մասում~~ ***21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում*** նշված քաղաքացիների համար՝ 12 ամիս.

~~1.2) սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված քաղաքացիների համար՝ այդ մասով սահմանված ժամկետներով.~~

2) պահեստազորի սպայական կազմի համար՝ 24 ամիս.

3) պարտադիր զինվորական ծառայություն չանցած եւ ռազմաուսումնական հաստատություններ ընդունված անձանց համար՝ ռազմաուսումնական հաստատությունում ուսումնառության ժամկետով, որը ռազմաբժշկական բնույթի ռազմաուսումնական հաստատություններում սովորողների մասով ներառում է նաեւ ինտերնատուրայում ուսումնառության ժամկետը:

Հոդված 19. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի կազմակերպումը

1. Պարտադիր զինվորական ծառայությունը կազմակերպվում է զորակոչի միջոցով: Զորակոչի ենթակա են 18 տարին լրացած արական սեռի եւ կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու համար դիմած իգական սեռի քաղաքացիները՝ մինչեւ ~~27 տարին լրանալը, իսկ սույն օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ եւ 7-րդ մասերով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից՝ գիտության եւ կրթության բնագավառներում տարկետում ստացած քաղաքացիները՝ մինչեւ 28 տարին լրանալը~~ ***37 տարին լրանալը***, ինչպես նաեւ բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցած ու պահեստազորի սպայական կազմ որակավորված արական սեռի քաղաքացիները՝ մինչեւ 35 տարին լրանալը (այսուհետ՝ պահեստազորի սպայական կազմ): Հայտարարված զորակոչին պարտադիր զինվորական ծառայության ենթակա են նաեւ այն քաղաքացիները եւ պահեստազորի

սպայական կազմը, որոնց համապատասխանաբար ~~27, 28 եւ (կամ)~~ ***37 կամ*** 35 տարին լրանում է տվյալ զորակոչի շրջանակներում զինված ուժերի համալրման ժամկետի ընթացքում:

~~1.1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա են նաեւ 27 տարին լրանալուց հետո օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած եւ մինչեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալը 12 ամսից պակաս ժամկետով այլ պետությունում զինվորական կամ 18 ամսից պակաս ժամկետով այլընտրանքային ծառայություն անցած կամ այդպիսի ծառայություն չանցած մինչեւ 37 տարեկան արական սեռի քաղաքացիները: Սույն մասում նշված քաղաքացին սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 5-րդ մասերով, 23-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերով եւ 24-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պայմանները չբավարարելու դեպքում կարող է 12 ամիս ժամկետով պարտադիր զինվորական կամ "Այլընտրանքային ծառայության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետներում այլընտրանքային ծառայություն անցնելու փոխարեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել երկու միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ եւ ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից:~~

~~1.2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տարիքը լրացած եւ սույն օրենքի կամ 2021 թվականի հունվարի 1-ին ուժը կորցրած "Զինապարտության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի կամ "Այլընտրանքային ծառայության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտմամբ շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները կարող են մինչեւ 37 տարին լրանալը, իսկ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները մինչեւ 45 տարին լրանալն իրենց ցանկությամբ զորակոչվել շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության՝ 24 ամիս ժամկետով, կամ 12 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով երկու միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ, կամ վեց ամիս ժամկետով՝~~

~~Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ, կամ մեկ ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով ութ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ, եթե չունեն սույն օրենքով սահմանված՝ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք, կամ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության չզորակոչվել՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով տասնհինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ: Սույն մասի համաձայն՝ օրենքի խախտմամբ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած եւ համապատասխանաբար 27 կամ 35 տարին լրանալուց հետո սույն օրենքով սահմանված՝ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք ունեցող քաղաքացիները չեն կարող զորակոչվել պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության եւ պարտավոր են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել տասնհինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ: Սույն մասի իմաստով՝ օրենքի պահանջների խախտմամբ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած է համարվում Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի նկատմամբ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափելու համար օրենքով սահմանված կարգով հարուցված է քրեական հետապնդում, կամ որը, "Պաշտպանության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, զինվորական հաշվառման կանգնելու համար դիմել է 27 տարին լրանալուց հետո:~~

Հոդված 21. Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմքերը

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, որը՝

1) առողջական վիճակի պատճառով ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար.

2) մինչեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունելը ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել է այլ պետության զինված ուժերում կամ այլ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս անցել է այլընտրանքային ծառայություն։ ***: Սույն կետում նշված՝ մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալը 12 ամսից պակաս ժամկետով այլ պետությունում զինվորական կամ 18 ամսից պակաս ժամկետով այլընտրանքային ծառայություն անցած կամ այդպիսի ծառայություն չանցած մինչև 37 տարեկան արական սեռի քաղաքացին սույն մասի 1-ին կամ 3-րդ կետերով կամ 2-րդ կամ 5-րդ մասերով սահմանված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կամ 3-րդ մասերով կամ 24-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու հիմքեր չունենալու դեպքում կարող է 12 ամիս ժամկետով պարտադիր զինվորական կամ «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետներում այլընտրանքային ծառայություն անցնելու փոխարեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել երկու միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ և ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից.***

3) ունի Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ժամանակ զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր, կամ որն ընտանիքի միակ արու զավակն է եւ ունի Հայաստանի Հանրապետության զինված ուժերում կամ այլ զորքերում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական

ստորաբաժանումներում զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր:

2. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից քաղաքացին ազատվում է նաեւ սույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով ու 24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում:

3. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, որը՝

1) առողջական վիճակի պատճառով ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար.

2) մինչեւ պահեստազորի սպայական կազմ որակավորվելն անցել է պարտադիր զինվորական ծառայություն:

4. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից քաղաքացին ազատվում է նաեւ սույն օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ մասերով ու 24-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերում:

5. Սույն հոդվածով չնախատեսված այլ հիմքով քաղաքացին կարող է բացառիկ դեպքերում ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Սույն մասի համաձայն ներկայացված՝ քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու դիմումը կարող է մերժել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմինը՝ սույն մասի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով նախատեսված դեպքերում:

5.1. (5.1-ին մասն ուժը կորցրել է 31.01.2023՝ 05.10.2022 ՀՕ-363-Ն օրենք)

5.2. (5.2-րդ մասն ուժը կորցրել է 31.01.2023՝ 05.10.2022 ՀՕ-363-Ն օրենք)

6. Այլ պետության քաղաքացիություն ընդունած Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին չի ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից անկախ այլ պետությունում ծառայելու հանգամանքից:

7. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու իրավունք ունեցող քաղաքացին կարող է իր դիմումի համաձայն հրաժարվել պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու իրավունքից եւ սույն օրենքով սահմանված կարգով զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության:

(21-րդ հոդվածը փոփ. 12.07.18 ՀՕ-370-Ն, 04.06.2019 ՀՕ-57-Ն, 12.04.2022 ՀՕ-104-Ն, 05.10.2022 ՀՕ-363-Ն օրենքներ)

Հոդված 23. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետում տալը

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչից քաղաքացուն առողջական վիճակի պատճառով տարկետում տրվում է՝

1) բուժման կարիք ունենալու կամ

2) զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչվելու դեպքերում:

2. Առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է երեք անգամ՝ մինչեւ մեկ տարի ժամանակով: Երրորդ անգամ տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին բժշկական փորձաքննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար եւ զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի եւ ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից:

3. Առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչված քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է մեկ անգամ՝ երեք տարի ժամանակով: Տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին բժշկական փորձաքննության

արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար եւ զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի եւ ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից:

4. Սույն հոդվածի 2-րդ ու 3-րդ մասերի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված եւ պահեստազորում հաշվառված քաղաքացին մինչեւ ~~27~~ ***37*** տարին լրանալը ենթակա է բժշկական վերափորձաքննության՝ հինգ տարին մեկ անգամ: Բժշկական վերափորձաքննության արդյունքներով պարտադիր զինվորական ծառայության համար պիտանի զինվորական ծառայության համար կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար ճանաչված քաղաքացին ենթակա է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի՝ ընդհանուր հիմունքներով:

Հոդված 24. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տալը

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրվում է այն քաղաքացուն, որն ունի՝

1) 65 տարին լրացած կամ ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող (ֆունկցիոնալության գնահատման ինքնասպասարկման բաղադրիչի ծանր կամ խորը սահմանափակումների դեպքում) կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված ծնողներ (միայնակ ծնող), եթե ծնողները (միայնակ ծնողը)՝

ա. չունեն այլ զավակ կամ

բ. ունեն այլ զավակ, որն անչափահաս է կամ ունի հաշմանդամություն կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ կամ գտնվում է պարտադիր զինվորական ծառայության մեջ.

2) առանց մոր մեծացող երեխա.

3) երկու կամ ավելի երեխա, բացառությամբ որդեգրված երեխաների.

4) երկրորդ երեխայով կամ առնվազն զույգ երեխայով վեցամսյա հղիության մեջ գտնվող կին.

5) մինչեւ 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող (ֆունկցիոնալության գնահատման ինքնասպասարկման բաղադրիչի ծանր կամ խորը սահմանափակումների դեպքում) կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված քույր կամ եղբայր, եթե չկա վերջիններիս ընտանիքի անդամ համարվող այլ անձ, կամ կա այդպիսի անձ, որը, սակայն, ունի հաշմանդամություն կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, կամ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձ է:

2. Եթե քաղաքացին անչափահաս տարիքում օրենքով սահմանված կարգով ճանաչվել է առանց ծնողական խնամքի մնացած երեխա եւ որդեգրվել է խնամատար հաստատությունից, եւ առկա են սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 5-րդ կետերով նախատեսված պայմանները, ապա նա օգտվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունքից: Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի իմաստով՝ ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, քույրը, եղբայրը, տատը, պապը, ինչպես նաեւ խնամակալ կամ հոգաբարձու ճանաչված այլ անձը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի եւ սույն օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով քաղաքացին համարվում է միայնակ ծնող ունեցող, եթե՝

1) մյուս ծնողը մահացել է կամ դատական կարգով ճանաչվել է մահացած.

2) մյուս ծնողն անհայտ է (օրենքով սահմանված կարգով հայրություն կամ մայրություն չի ճանաչվել) կամ դատական կարգով ճանաչվել է անհայտ բացակայող.

3) մինչեւ քաղաքացու 18 տարին լրանալն առնվազն հինգ տարի առաջ ծնողներն ամուսնալուծվել են, եւ ծնողները բնակվում են միմյանցից առանձին.

4) ծնողների ամուսնությունն օրենքով սահմանված կարգով չի գրանցվել, եւ ծնողները բնակվում են միմյանցից առանձին:

4. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով չնախատեսված դեպքերում քաղաքացուն ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում կարող է տրվել քաղաքացու դիմումի հիման վրա եւ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով՝ սույն օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի "բ" ենթակետով նախատեսված դեպքում քաղաքացուն տարկետում տրվում է մինչեւ նրա ծնողների կամ միայնակ ծնողի այլ զավակի 18 տարին լրանալու կամ պարտադիր զինվորական ծառայությունից արձակվելու օրը, 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դեպքում՝ մինչեւ երկրորդ երեխայի կամ առնվազն զույգ երեխաների ծննդյան օրը, իսկ 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված՝ մինչեւ 18 տարեկան քույր կամ եղբայր ունենալու դեպքում՝ մինչեւ քրոջ կամ եղբոր 18 տարին լրանալու օրը: Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված մյուս դեպքերում քաղաքացուն տարկետում տրվում է մինչեւ նրա ~~27~~ ***37*** տարին լրանալու օրը: Եթե ~~27~~ ***37*** տարին լրանալու օրվա դրությամբ քաղաքացին չի կորցրել ստացած տարկետման իրավունքը, ապա ~~27~~ ***37*** տարին լրանալու հիման վրա ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից:

Հոդված 29. Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողներին զինվորական ծառայությունից արձակելը

1. Շարքային եւ սպայական կազմերի պարտադիր զինծառայողները զինվորական ծառայությունից արձակվում են՝

1) սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության ժամկետը լրանալու դեպքում.

2) վաղաժամկետ՝

ա. սույն օրենքի 28-րդ հոդվածի 11-րդ մասի 6-րդ կետի համաձայն առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի կամ 7-րդ կետի համաձայն առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու դեպքում,

բ. սույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին կամ 4-րդ կամ 6-րդ մասերով սահմանված ընտանեկան պայմաններից ելնելով, բացառությամբ կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնող իգական սեռի զինծառայողների,

գ. զոհվելու (մահանալու) կամ դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելու դեպքերում,

դ. շարքային կազմի պարտադիր զինծառայողները՝ սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված դեպքում, բացառությամբ կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնող իգական սեռի զինծառայողների:

2. Պարտադիր զինվորական ծառայության ընթացքում ազատազրկման դատապարտված եւ պատիժ կրող շարքային կամ սպայական կազմերի պարտադիր զինծառայողները դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա հանվում են զորամասի անձնակազմի ցուցակներից եւ հաշվառվում են իրենց զորակոչն իրականացրած զինվորական կոմիսարիատի համապատասխան բաժիններում, իսկ ազատազրկման վայրում պատժի կրումից ազատվելուց հետո հայտարարված զորակոչի ժամանակ ենթակա են զորակոչման պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը շարունակելու, բացառությամբ սույն օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի, ինչպես նաեւ եթե չեն օգտվում սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր

զինվորական ծառայության զորակոչից առողջական վիճակի պատճառով կամ ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում ստանալու իրավունքից, որոնց առկայության պարագայում հաշվառվում են պահեստազորում՝ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի "ա" եւ "բ" ենթակետերով սահմանված կարգով, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված շարքային կազմի պարտադիր զինծառայողների:

3. Սույն հոդվածի 1-ին մասի համաձայն շարքային եւ սպայական կազմերի պարտադիր զինծառայողները զինվորական ծառայությունից արձակվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով՝ արձակման հիմք ծագելու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում: Առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից վաղաժամկետ արձակվելու դեպքում զինծառայողին տրամադրվում են նաեւ նրա առողջական վիճակի վերաբերյալ առկա փաստաթղթերը:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի "ա" ենթակետի եւ 2-րդ մասի հիման վրա առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչվելու հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից արձակված եւ պահեստազորում հաշվառված քաղաքացիները երեք տարին մեկ ենթակա են բժշկական վերափորձաքննության, որի արդյունքներով պարտադիր զինվորական ծառայության համար պիտանի կամ սահմանափակումով պիտանի ճանաչվելու դեպքում շարքային կազմի նախկին պարտադիր զինծառայողները՝ ~~մինչեւ 27 տարին լրանալը, իսկ սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված դեպքում՝~~ մինչեւ 37 տարին լրանալը, եւ սպայական կազմի նախկին պարտադիր զինծառայողները՝ մինչեւ 35 տարին լրանալը, ~~իսկ սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված դեպքում՝ մինչեւ 45 տարին լրանալը,~~ ենթակա են սույն օրենքով սահմանված կարգով զորակոչի միջոցով ուղարկվելու շարունակելու պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը, եթե նրանց չծառայած ժամկետը գերազանցում է վեց ամիսը:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի "բ" ենթակետի եւ 2-րդ մասի հիման վրա ընտանեկան պայմաններից ելնելով պարտադիր զինվորական ծառայությունից արձակված եւ պահեստազորում հաշվառված շարքային կազմի նախկին պարտադիր զինծառայողները՝ ~~մինչեւ~~

~~27 տարին լրանալը, իսկ սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված դեպքում՝~~ մինչեւ 37 տարին լրանալը, եւ սպայական կազմի նախկին պարտադիր զինծառայողները՝ մինչեւ 35 տարին լրանալը, ~~իսկ սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված դեպքում՝ մինչեւ 45 տարին լրանալը,~~ ենթակա են սույն օրենքով սահմանված կարգով զորակոչի միջոցով ուղարկվելու շարունակելու պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը, եթե զինվորական ծառայությունից արձակվելու հիմք հանդիսացած հանգամանքները վերացել են, եւ նրանց չծառայած ժամկետը գերազանցում է վեց ամիսը:

Հոդված 56. Պահեստազորում հաշվառման կարգը

1. Պահեստազորում հաշվառումը զինվորական հաշվառման անբաժանելի մասն է, որի նպատակն է ապահովել խաղաղ ժամանակ պահեստազորային պատրաստության շրջանակներում քաղաքացիների ռազմական ունակությունների կատարելագործման եւ վերապատրաստման գործընթացի, իսկ պատերազմի ժամանակ՝ զորահավաքային զորակոչի պատշաճ իրականացումը:

2. Պահեստազորում հաշվառվում են՝

1) ժամկետային պարտադիր կամ պայմանագրային զինվորական կամ այլընտրանքային ծառայություն անցած եւ համապատասխան ծառայությունից սույն օրենքով սահմանված կարգով արձակված քաղաքացիները.

2) սույն օրենքով սահմանված դեպքերում պարտադիր զինվորական ծառայությունից ազատված քաղաքացիները.

~~2.1) սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով եւ ժամկետներով շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն անցած եւ համապատասխան ծառայությունից սույն օրենքով սահմանված կարգով արձակված կամ շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցնելու~~

~~դիմաց սահմանված համապատասխան գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարած քաղաքացիները.~~

~~2.2) սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասով սահմանված կարգով եւ ժամկետներով շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն անցած եւ համապատասխան ծառայությունից սույն օրենքով սահմանված կարգով արձակված կամ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցնելու դիմաց սահմանված համապատասխան գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարած քաղաքացիները.~~

3) սույն օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում նշված քաղաքացիները.

4) բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու ընթացքում ռազմական պատրաստություն անցած եւ սույն օրենքով սահմանված կարգով "լեյտենանտ" զինվորական կոչում ստացած քաղաքացիները.

5) ռազմահաշվառական մասնագիտություն ունեցող իգական սեռի քաղաքացիները.

6) Հայաստանի Հանրապետության ոստիկանության, պետական պահպանության ծառայության, ազգային անվտանգության ծառայության, քրեակատարողական ծառայության եւ փրկարարական ծառայության համակարգերից արձակված քաղաքացիները՝ նրանց շնորհված հատուկ կոչումները (բացառությամբ զինվորական կոչումների) հաշվի առնելով.

7) 37 տարեկանը լրացած եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձինք.

8) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած եւ զինվորական կոչում ունեցող անձինք՝ ունեցած զինվորական կոչումները հաշվի առնելով՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան.

9) սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցնելու դիմաց օրենքով սահմանված կարգով վճարներ կատարած քաղաքացիները.

10) օրենքով սահմանված կարգով զինվորական հաշվառման ենթակա եւ սույն մասում չնշված այլ կարգավիճակ ունեցող քաղաքացիները:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված դեպքերում քաղաքացիները պահեստազորում հաշվառվում են տարածքային զինվորական կոմիսարի որոշմամբ:

(56-րդ հոդվածը փոփ. 23.12.2022 ՀՕ-621-Ն, 16.01.2024 ՀՕ-23-Ն օրենքներ)